

նոնցմէ մէկը Դաւիթ կը կոչուէր, եւ երկրորդը Մելքիսեդեկ, որուն ի նպաստ հրաժարած էր Դաւիթ (իշխանութենէն) . այս հրաժարմամբ կաթողիկոսութիւնը Մելքիսեդեկի ձեռքն էր : Ասիկա առաքինի եւ խոհեմ անձ մըն է : Յիշատակաց արժանի Կղեմէս Ը. քահանայապետի օրով առաքելական Աթոռին եպիսկոպոս մ'ուղարկած էր, որպէս զի մատուցանէ սնոր իւր հնազանդութիւնը . այն ատենէն ի վեր ինքզինքը հանդէպ Ս. Աթոռին միշտ բարեմիտ ցոյց կու տայ :

Յիշեալ Կաթողիկոսները զեռ կը շարունակէին մնալ նոյն տարածայնութեան մէջ : Զուգայեցիները Դաւթի կողմը կը բռնէին . իսկ Երեւանցիները Մելքիսեդեկի կողմը կը պաշտպանէին : Այս վիճակի մէջ կը գտնուէին Հայաստանի եկեղեցական պայմանները, երբ հասաւ հոն Հ. Գուլիէլմոս, այցելելու Ս. Գրիգորի եւ ուրիշ մարտիրոսներու սրբավայրերը : Այս սուրբերու յիշատակը Հոռմէական Եկեղեցին ալ կը տօնէ իւր Տօնացոյցին մէջ : Տեոաւ անիկա, թէ ինչպէս անշուք վայրի մը մէջ կը հանգչին այդ սուրբերու նշխարները, եւ թէ ինչպէս դարձեալ կա'մ քրիստոնեաներու անհոգութեամբն կա'մ այդ երկրին թուրքի եւ պարսկի միջեւ սահման ըլլալու պատճառաւ ենթարկուած են (այդ նշխարները) ասպատակութեանց, եւ չկայ հնարաւորութիւն եւ դիւրութիւն, որ հաւատացեալներն ըստ պատշաճի եւ յարգութեամբ պահպանեն զանոնք եւ կամ ուխտագնացու-